



«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

«21» մայիսի, 2019թ

N 2-2019

ք.Ստեփանակերտ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԱՀ օրենքի 84-րդ հոդվածը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.4 կետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 20.05.2019թ. նիստի N2-2019 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդը որոշում է՝

1. 2019թ. հունիսի 30-ին, ժամը 14:00-ին, ԱՀ, ք. Ստեփանակերտ, Ն. Ստեփանյանի 35 հասցեում, «Վալերա Գարդեն» համալիրի մեծ կոնֆերենս սրահում, գումարել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով:

Բաժնետերերի տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմել 2019թ. մայիսի 21-ի, ժամը 9:00-ի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

2. Հաստատել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր տարեկան ժողովի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
3. Հաստատել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր տարեկան ժողովի քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը՝ համաձայն հավելվածի:
4. «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր տարեկան ժողովին առաջարկել «Ֆոր էՅ Քնսայթինգ» ՓԲԸ-ն որպես 2019թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող կազմակերպություն:
5. Հանձնարարել Ընկերության գլխավոր տնօրենին ապահովել սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների իրականացումը:
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2019 թվականի մայիսի 21-ից:

Խորհրդի նախագահ՝



Ա. Հարությունյան